Հունվարի 24-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 12 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղում մանկապարտեզի կառուցում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական գյուղի միջնակարգ դպրոցի հիմնական մասնաշենքի տանիքի վերակառուցում», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Մուշկապատ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծի փորձաքննություն» օժանդակ, «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Չարերքթար – Դրմբոն 10 և 10.4 կիլոմետր երկարությամբ հատվածների ու Ալիշան – Սարսանգ 4.8 երկարությամբ հատվածի կառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ, «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Քարավաճառի խաչմերուկ – Չարերքթար 1-ին տեղամասի 12.6 կիլոմետրի և 2-րդ տեղամասի 9.8 կիլոմետրի հատվածների կառուցման հեղինակային հսկողություն» օժանդակ և «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի Մաղավուզ – Մարտակերտ 12.6 կիլոմետր և Դրմբոն – Ալաշան 10 կիլոմետր հատվածների կառուցման նախագծի փորձաքննություն» օժանդակ ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Վաչե և Թամար Մանուկյաններ» մատենադարանի կահավորում», «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կահավորում» և «Ավտոտնտեսության շենքի հակասառեցման համակարգերի տեղադրում» ծրագրերը.

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2014 թվականի ընթացքում իրականացվող ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Երեխաների հովանավորություն» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: